

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ**



**Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր**

Վերջերս պաշտոնական այցով Ավստրիայի Հանրապետությունում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նա հանդիպում է ունեցել Ավստրիայի գյուղատնտեսության, անտառտնտեսության, բնապահպանության և ջրային տնտեսության դաշնային նախարար Անդրե Ռուպրեխտերի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև գյուղատնտեսության ոլորտում համագործակցության հնարավոր ուղղությունները, դրանց ընդլայնման հեռանկարները, ինչպես նաև՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Կողմերը հատկապես շեշտել են անասնաբուծության և կաթնամթերքի արտադրության բնագավառներում համագործակցության զարգացման անհրաժեշտությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Ավստրիայի հետ համագործակցության շրջանակում, կարևորել է տոհմային կենդանիների ներկրման ծրագիրը, որը նախատեսում է բարելավել գյուղատնտեսական կենդանիների գենետիկական հատկանիշները, ինչպես նաև կենդանիների համարակալման և առողջության բարելավման արդիական համակարգի ներդրումը:

Նախարարներն ընդգծել են իրենց ղեկավարած գերատեսչությունների միջև փորձի և գիտական տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ օրգանական գյուղատնտեսության, գյուղատնտեսական կոոպերատիվների, հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության, անտառների կայուն կառավարման բնագավառներում: Նախարար Սերգո Կարապետյանն ավստրիացի գործընկերոջը հրավիրել է այցելել Հայաստան:

Է 2

**Գյուղատնտեսական նոր սպասարկման կենտրոն մարզում**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արմավիրի մարզի Նորապատ համայնքում մասնակցել է գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը: Կենտրոնը հիմնադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի կողմից, ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն» հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում:

Բացմանը մասնակցում էին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը և այլ հյուրեր: «Մեր հանրապետությունում ստեղծվել են յոթ գյուղատնտեսական սպասարկման կենտրոններ, որոնցից միայն մեկն էր այգեգործական ուղղվածության: Նոր կենտրոնը կլինի նման բնույթի երկրորդ կառույցը, իսկ հետագայում այսպիսի կենտրոններ նախատեսվում է կառուցել բոլոր մարզերում», - նշել է Սերգո Կարապետյանը: Նախարարը միաժամանակ հավելել է, որ պարարտանյութերի, թունաքիմիկատների և գյուղտեխնիկայի վաճառքից բացի, կենտրոնը կզբաղվի նաև խորհրդատվական գործունեությամբ, իսկ հետագայում՝ նաև կաթիլային ոռոգման համակարգերի ու հակակարկտային ցանցերի ներկրման, նաև՝ վարկային ծրագրերի իրականացմամբ:

Է 3

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

**ՀՀ կառավարությունում**

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Ողջի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» օրենքի նախագծին:

Օրենքի ընդունման արդյունքում և դրա հիման վրա, նախատեսվում է իրականացնել ներդրումային ծրագիր, որը ենթադրում է՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ՉՊՄԿ) պոչամբարներում կուտակված արտադրական լցակույտերի վերամշակում: Միայն ՉՊՄԿ-ի պոչամբարներում եղած մոտ 300 մլն տոննային տարեկան ավելանում է ևս 18-20 մլն տոննա, ինչը բնապահպանական մեծագույն խնդիր է: «Ալյուտիգ» ՍՊԸ-ն հանդիսանում է օրենքի իմաստով ծրագիր իրականացնող, որը մտադիր է կառուցել տարեկան 12.5 մլն տոննա արտադրողականությամբ ֆաբրիկա՝ վերամշակելու համար ներկայումս չօգտագործվող այդ լցակույտերը:

Նախատեսվում է նաև կառուցել կոմպոզիտային նյութերի գործարան, որը, որպես հումք, նույնպես օգտագործելու է պոչամբարի խյուսը: Առաջին փուլում ներդրվելու է մոտ 240 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Երկրորդ փուլն ընդգրկվելու է 2019-2025թթ., երբ գործարանի հզորությունը հասցվելու է տարեկան մինչև 25 մլն տոննայի վերամշակման:

**Ավելացնել արտահանման ծավալները**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է կաթ վերամշակող ընկերությունների ներկայացուցիչներին՝ ոլորտի ընթացիկ խնդիրները քննարկելու նպատակով:

Հանդիպմանը ներկա էին նախարարի տեղակալներ Գրիշա Բաղդյանը, Ռոբերտ Մակարյանը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուծության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը, ոլորտի այլ պատասխանատուներ: «Այսօր մենք պետք է քայլեր ձեռնարկենք կաթի արտադրության և արտահանման ծավալների ավելացման ուղղությամբ: Իսկ դա հնարավոր է իրականացնել միայն համատեղ ջանքերի, ինչպես նաև՝ միավորված ու համակարգված աշխատանքի շնորհիվ», - իր խոսքում նշել է նախարարը: Խորհրդակցության ընթացքում մասնավորապես անդրադարձ է կատարվել կաթի մթերման գների կարգավորման խնդրին՝ կարևորելով վերամշակող ընկերությունների կողմից կաթի ընդունման միասնական գների սահմանման անհրաժեշտությունը: Նախարարը հորդորել է վերամշակող ընկերություններին՝ մինչև հունիսի 1-ը, այն է՝ արտադրության պահվածքի անցնելը, պահպանել մթերման գործող գները:

Նախարարը նաև հորդորել է հանդիպման մասնակիցներին՝ դիվերսիֆիկացնել իրենց ընկերությունների արտադրանքի, մասնավորապես՝ պաղպաղի տեսակակիս, որը կարող է մեծ պահանջարկ ունենալ Եվրասիական տնտեսական միության տարածքում: Անդրադառնալով ոլորտի այլ խնդիրներին՝ նախարարը, մասնավորապես, մատնանշել է գյուղատնտեսական կոոպերատիվների հետ սերտ համագործակցության և արտադրանքի որակի բարձրացման նպատակով նորագույն տեխնոլոգիաների ներդրման կարևորությունը: Խորհրդակցության ավարտին նախարարը հանձնարարել է փոխնախարարներին, մեկշաբաթյա ժամկետում, ընկերությունների հետ քննարկել կաթի մթերման գներին և արտահանմանն առնչվող հարցերը, այդ թվում՝ նախարարությանը, շաբաթական կտրվածքով, տեղեկատվություն տրամադրել կաթի գների, պարտքերի և մթերման ծավալների վերաբերյալ:

<b>Ներդրումային ծրագրեր Սյունիքում</b>	<b>Էջ 4</b>
<b>Խոստումնալից արդյունք</b>	<b>Էջ 5</b>
<b>Մասնագետի խորհուրդ</b>	<b>Էջ 7</b>

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր

Հանդիպման ավարտին՝ երկու երկրների նախարարները ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանի գյուղատնտեսության նախարարության և Ավստրիայի գյուղատնտեսության, անտառտնտեսության, բնապահպանության և ջրային տնտեսության դաշնային նախարարության միջև գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառներում համագործակցության մասին:

Նույն օրը նախարար Ս. Կարապետյանը հանդիպումներ է ունեցել Նաև Ավստրիայի Եվրոպական, ինտեգրման և արտաքին գործերի նախարարության միջազգային համագործակցության և միջազգային զարգացման քաղաքականության բաժնի ղեկավար, դեսպան Պետեր Լաունսկիի, ինչպես նաև Ավստրիայի զարգացման գործակալության ղեկավար Մարտին Լեդլտերի հետ: Զննարկվել են երկկողմ հետաքրքրությունները կարգեր, մասնավորապես՝ գործակալության կողմից Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ իրականացված և նախանշվող ծրագրերի շուրջ: Պարոն Կարապետյանը, ընդգծելով հատկապես անասնաբուժության բնագավառում զարգացման ծրագրեր իրականացնելու կարևորությունը, առաջարկել է ավստրիական կողմին ուսումնասիրել Հայաստանում տոհմային անասնաբուժական տնտեսություն հիմնելու, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման համակարգ ներդնելու հնարավորությունները:

Հանդիպումների ընթացքում անդրադարձ է եղել նաև, Եվրասիական տնտեսական միության անդամակցության պայմաններում, Հայաստանի և ԵՄ պետությունների հետագա համագործակցության հարցին: Նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ մեզ համար Եվրոպական երկրների հետ համագործակցությունը համարվում է առաջնային ուղղություն, և դրա համար առկա են իրատեսական հնարավորություններ: Մասնավորապես՝ նպատակահարմար է Եվրոպական ներդրումներով Հայաստանում կազմակերպել կաթի, մսի, բանջարեղենի, մրգի վերամշակման գործարաններ՝ պատրաստի արտադրանքը դեպի ԵՄ երկրներ արտահանելու հեռանկարով: Ավստրիական կողմը պատրաստակամություն է հայտնել ուսումնասիրել ներկայացված առաջարկությունները և առաջիկայում գործնական քայլեր իրականացնել՝ այս ոլորտներում համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Դրական արդյունքներ ջրամատակարարման համակարգում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է գերմանական KfW բանկի հայաստանյան ծրագրերի ղեկավար Եվա Վիթթի գլխավորած պատվիրակությանը:

Բարձր գնահատելով KfW բանկի գործունեությունը Հայաստանում և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, նախարարն ընդգծել է, որ մասնավորապես՝ ոռոգման և խմելու ջրի ոլորտներում առկա է նոր ծրագրեր իրականացնելու անհրաժեշտություն: «Ոռոգման խնդիրը գյուղատնտեսության ոլորտի զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկն է, և թեև վերջին տարիներին, KfW բանկի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ, մեզ հաջողվել է ջրամատակարարման ոլորտում հասնել բավականին լավ արդյունքների, սակայն, կարևոր է շարունակել համատեղ ծրագրեր իրականացնել այս ոլորտում՝ ավելի մեծ հաջողություններ գրանցելու նպատակով», - նշել է նախարարը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են KfW բանկի կողմից Հայաստանում իրականացվող ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերը, այդ թվում՝ Կապսի ջրամբարի վերակառուցումը, ինչը հնարավորություն կընձեռնի ավելացնել Շիրակի մարզի հողօգտագործողների ոռոգման ջրի պահանջարկի բավարարման ծավալները: Սերգո Կարապետյանն առաջարկել է բանկի ներկայացուցիչներին՝ ուսումնասիրություններ կատարել և քննարկել բանկի ծրագրերում Մաստարայի ջրամբարի կառուցման խնդրի ընդգրկման հնարավորությունը, ինչին, ի պատասխան՝ KfW բանկի ծրագրերի ղեկավարը տեղեկացրել է, որ հարցի քննարկումը հնարավոր կլինի միայն Հայաստանում ստորգետնյա և մակերեսային ջրերի օգտագործման վերաբերյալ լիարժեք ուսումնասիրությունների արդյունքում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկությամբ, ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ, մշակվել են մեխանիզմներ՝ KfW բանկի աջակցությամբ, ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրական համակարգ ստեղծելու նպատակով: Համատեղ քննարկումների արդյունքում, նպատակահարմար է համարվել ստեղծել ապահովագրական հարցերով զբաղվող կազմակերպություն: Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրմանը՝ Սերգո Կարապետյանը նշել է, որ այս ոլորտում ևս ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը KfW բանկից ակնկալում է օժանդակություն: Հանդիպմանը KfW բանկի ներկայացուցիչները տեղեկացրել են, որ բանկի ֆինանսավորմամբ, Գերմանա-հայկական հիմնադրամի միջոցով, Հայաստանում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության համար տրամադրվում են վարկեր: Ընդ որում, այդ ծրագրի երկրորդ փուլով նախատեսվում է այդ նպատակի համար ստանալ ևս 15 մլն եվրո, որը նպատակաուղղված կլինի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը: Հանդիպման ավարտին՝ կողմերը ևս մեկ անգամ ընդգծել են հետագա համագործակցության պատրաստակամությունն ու համատեղ ծրագրերի շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը:



ՀԱՄԱԺՈՂՎ

Նոր տնտեսական հեռանկարներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մասնակցել է «Ինվեստ Արմենիա» գործարար համաժողովին, որը կազմակերպվել էր «Business partners of Armenia» ընկերության կողմից՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Էկոնոմիկայի, ՀՀ գյուղատնտեսության և սփյուռքի նախարարությունների, ինչպես նաև՝ ՀՀ Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության աջակցությամբ:

Համաժողովի նպատակն էր՝ հանգամանակից ներկայացնել Հայաստանի տնտեսության ներկա ներուժն ու ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելուց հետո, Հայաստանի տնտեսության առջև բացվող հեռանկարները:



Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ թեպետ վերջին տարիներին գյուղատնտեսության բնագավառը Հայաստանում դիմափկ զարգացում է ապրում, սակայն այս ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են ներդրումներ: «Գյուղատնտեսության ոլորտում կան մի շարք ճյուղեր, որոնցում առկա է հնարավորություն՝ ավելացնել արտադրության և արտահանման ծավալները: Հատկապես այդ հանգամանքը կարևորվում է՝ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պայմաններում, որը մեր երկրի առջև մեծ շուկա է բացել, և մենք կարող ենք ոչ միայն կրկնապատկել, այլև եռապատկել մեր արտահանման ծավալները», - նշել է նախարարը:

Սերգո Կարապետյանը վստահություն է հայտնել, որ համաժողովը հրաշալի հարթակ է գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի ներդրումային ներուժը ներկայացնելու և արտասահմանյան գործարարների հետ նոր գործարար կապեր հաստատելու համար: Համաժողովի շրջանակում տեղի է ունեցել նաև շնորհանդես, որտեղ ներկայացվել են գյուղատնտեսական ներդրումային ծրագրերը:

Ֆորումին կից գործել է նաև հայաստանյան տարբեր ընկերությունների արտադրատեսակների ցուցահանդես: Համաժողովի ընթացքում նախարարը շրջել է տաղավարներով և ծանոթացել ներկայացված ապրանքատեսակներին:

**ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետի տեղակալ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Գագիկ Սուրենյանն, անդրադառնալով եղանակային առաջիկա կանխատեսումներին, նշել է, որ մինչև մայիսի 29-ը Հանրապետության ողջ տարածքը՝ մանավանդ երեկոյան ժամերին, կգտնվի ակտիվ ցիկլոնային դաշտում, որի հետևանքով սպասվում է անձրև և ամպրոպ, իսկ առանձին շրջաններում կարկուտ և քամու ուժգնացում:

«Մինչև մայիսի 29-ը օդի ջերմաստիճանը էապես չի փոխվելու, Արարատյան դաշտում և մայրաքաղաքում ջերմաստիճանը կտատանվի 13-14, իսկ ցերեկը՝ 24-25 աստիճանի տիրույթում», - նշել է Գ. Սուրենյանը:

Ինչ վերաբերում է ամռան կանխատեսումներին, ապա դրանք դեռևս պատրաստ չեն, բայց Գագիկ Սուրենյանի տեղեկացմամբ, վիճակագրությունը ցույց է տալիս, որ տաք ձմեռներին հաջորդում է տեղումնառատ ու զով մարտ:

Հանրապետության տարածքում՝ մայիսի 15-ին ժամանակ առ ժամանակ շրջանների զգալի մասում սպասվում է անձրև և ամպրոպ, հնարավոր է կարկուտ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ արագությամբ, 16-18-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավ-արևմտյան հատվածում 5-10 մ/վրկ է: Օդի ջերմաստիճանը էապես չի փոխվի, մայիսի 16-18-ին կբարձրանա 4-6 աստիճանով:

Երևանում՝ ժամանակ առ ժամանակ սպասվում է անձրև և ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ արագությամբ, 16-18-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ**

**Գյուղատնտեսական սպասարկման կենտրոն մարզում**

1



Նորաստեղծ կենտրոնը կնպաստի առաջադեմ տեխնոլոգիաների և ֆերմերային գործարարության զարգացման փորձի տարածմանն ու առաջխաղացմանը՝ էական դերակատարում ունենալով շուկայական կապերի դուրացման և ֆերմերների ու գյուղական ՓՄՁ-ների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության գործում: Կենտրոնը CARD հիմնադրամի հետ համատեղ, մշտական կապ կստեղծի այգեգործության, վերամշակման և ֆերմերային տնտեսությունների կառավարման նորագույն տեխնոլոգիաներ մատակարարող աշխարհառօրյա ընկերությունների և հայ ֆերմերների միջև: Կենտրոնը կծառայի նաև՝ որպես գործնական սեմինարների անցկացման վայր՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար:

**Մեղվաբույծների հետ քննարկվել են սուկա խնդիրները**

Նույն օրը նախարարը մեկնել է Արագածոտնի մարզպետարան, որտեղ անցկացվել է մեղվաբուծության ոլորտին նվիրված խորհրդակցություն: Միջոցառմանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Հայաստանի մեղվաբուծների ազգային ֆեդերացիայի նախագահ Ռոզա Ծառուկյանը:

Բացելով խորհրդակցությունը՝ նախարարն իր ողջույնի խոսքում ամփոփել է վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքները: Մասնավորապես՝ անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտին հատկացվող պետական աջակցության ծրագրերին՝ նախարարը նշել է, որ պարարտանյութերի և դիզելային վառելիքի բաշխման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է, և գյուղացիական տնտեսություններն, անհրաժեշտության դեպքում, կարող են լրացուցիչ հայտեր ներկայացնել: Նախարարը տեղեկացրել է, որ ծրագրի շրջանակում պարարտանյութերը հողօգտագործողներին տրամադրվում են մատչելի գներով՝ 1 պարկ (50 կգ) ազոտական պարարտանյութը՝ 6000, իսկ կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերը՝ 7000 դրամով:

Դիզելային վառելանյութը հողօգտագործողներին տրամադրվում է 1 լիտրը՝ 350 դրամ վաճառքի արժեքով, 1 հեկտարի համար՝ մինչև 200 լիտր նորմայով: Սահմանված առավելագույն քանակը 600 լիտր է: Նախարարի խոսքով՝ գյուղատնտեսությունը հանրապետությունում վերջին տարիներին դինամիկ զարգացում է ապրում՝ ապահովելով միջինում 7,5 տոկոս աճ, և զարգացման մեծ ներուժ ունի: Նախարարի հավաստմամբ, վերջին տարիներին հանրապետությունում ավելացել է անասնաբուժաբանական, այդ թվում՝ նաև Արագածոտնի մարզում, որ ժամանակին իրականացվում են գյուղատնտեսական կենդանիների պատվաստումները: Ընդգծելով, որ տարին բարենպաստ է և հատկապես պտղի ու խաղողի բարձր բերք է սպասվում, Սերգո Կարապետյանը ևս մեկ անգամ հավաստել է, որ մթերումները կիրականացվեն ամբողջ ծավալով, պետությունը կաջակցի վերամշակող ընկերությունների խնդիրների լուծմանը և կհետևի, որպեսզի մթերումների գործընթացը պատշաճ և ժամանակին կազմակերպվի:



Հաշվի առնելով հանրապետությունում դիտվող խոնավ և տաք եղանակային պայմանները՝ նախարարը խորհուրդ է տվել գյուղացիներին անպայման բուժման աշխատանքներ կատարել կորիզավոր պտղատեսակների հիմնական վնասատուների և հիվանդությունների դեմ, քանի որ նման եղանակային պայմանները նպաստում են մի շարք սնկային հիվանդությունների բուռն զարգացմանը:

Նախարար Սերգո Կարապետյանը հայտնել է նաև, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, Հայաստանի մեղվաբուծների ազգային ֆեդերացիայի նախագահ Ռոզա Ծառուկյանի հետ համատեղ, այցելություններ են կատարվելու բոլոր մարզեր՝ տեղի մեղվաբուծների հետ առկա խնդիրները քննարկելու, առաջարկությունները լսելու, մեղվաբուծության զարգացման ծրագրեր կազմելու և կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

Խորհրդակցության ավարտին նախարարը լսել և պատասխանել է մեղվաբուծների կողմից ներկայացված հարցերին:

**ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀՈՒՉՈՂ ՀԱՐՑԵՐԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

Օրերս Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն այցելել է Ապարանի տարածաշրջան և հանդիպել բնակչության հետ: Նրանք մարզպետին ներկայացրել են իրենց համայնքներում առկա հիմնախնդիրները:

Առաջին կանգառը Արայի համայնքում էր: Հանդիպումը կայացավ համայնքապետարանի բակում: Իրենց հուզող հարցերից բնակիչներն առանձնացրել են Վարդենուտի ջրամբարի գործարկմամբ պայմանավորված՝ ոռոգման ջրի մատակարարման, խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի հարցերը: Գյուղացիները գոհ էին, որ իրենց մոտ են ընթանում անտառապատման և խորքային հորի կառուցման ծրագրերը:



Մարզպետն այցելել է նաև Վարդենուտ, Արագած, Ծաղկաշեն և Շենավան համայնքներ: Գյուղաբնակների կողմից բարձրացված հարցերն ընդհանրական բնույթ ունեին: Դրանք վերաբերում էին ջրամատակարարմանը, գազիֆիկացմանը, միջհամայնքային ճանապարհների բարելավմանը, համայնքների խոշորացմանը, գյուղատնտեսական արտադրանքի մթերմանը, ինչպես նաև անձնական մի վերջ հարցերի: Բարձրացված բոլոր խնդիրների վերաբերյալ մարզպետը պարզաբանումներ է կատարել և որոշակի նշել դրանց լուծման ժամանակահատվածն ու ընթացքը: Ըստ մարզպետի, շարունակվում է կառավարության կողմից համայնքներին տրվող դիզելային վառելիքի, պարարտանյութի հատկացումը, և բնակիչները կարող են իրենց պահանջարկին համապատասխան ձեռք բերել դրանք:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական և բժշկական աջակցություն, հատկացվել առողջարանի ուղեգրեր, իսկ նորածիններին նվիրվել է մանկական հագուստ: Մարզպետի հանդիպումները համայնքների բնակիչների հետ շարունակելի են:

**ՄԱՅԻՍԻ 15-Ը ԿԻՆ ԶԵՆՆԵՐԵՑՆԵՐԻ ՕՐՆ Է**

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) և ՀՀ Կին ձեռներեցների ցանցը (ՀՀ ԿԶՑ) կազմակերպում են «Նոր զարգացումների հեռանկար» թեմայով կանանց ձեռներեցության միջազգային համաժողով՝ Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի հովանու ներքո (FCEM.org):

«Նոր զարգացումների հեռանկար» թեմայով կանանց ձեռներեցության միջազգային համաժողովը կկայանա 2015թ. հունիսի 8-11-ը, Երևանում: Միջազգային համաժողովը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ գործարար համաժողով, այցելություն հայաստանյան արտադրողներին, ցուցահանդես էքսպոզիցիոնալի և բազմակողմանի հանդիպումներ կազմակերպելու հնարավորությամբ, բիզնես հանդիպումներ:

«Կանանց ձեռներեցության միջազգային համաժողովի նպատակներն են՝ նպաստել Հայաստանի և արտերկրի կին ձեռներեցների ու գործարարների միջև կապերի ստեղծմանը և համագործակցության ամրապնդմանը, Հայաստանում կանանց ձեռներեցության խթանմանը, փոքր ու միջին ձեռնարկատիրության համար գործարար միջավայրի բարելավմանը, ներդրումների իրականացմանը և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը»,- նշել է ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Համաժողովի կազմակերպիչ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) նախագահուհի Սուսաննա Կարամյանը, 2011 թ. ստեղծված ՀՀ Կին ձեռներեցների ցանցն այսօր միավորում է շուրջ 300 ձեռներեց կանանց՝ ՀՀ տարբեր մարզերից: ՀԵԿԱ-ն, ՀՀ Կին ձեռներեցների ցանցի միջոցով, խրախուսում և ապահովում է գործարար կանանց միջև կապերի հաստատումը Հայաստանում և արտերկրում:

Ն. Սահակյան

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԵՈՒՅՎ**

**ԷԿՈՄԻԳՐԱՑԻԱ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Օրերս գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ն շահագրգիռ անձանց ներկայացրեց «Էկոմիգրացիա. գործնական ուղեցույց» տեղեկատվական գրքույկը, որը մշակվել է հրատարակվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Էկոմիգրացիա. երկխոսություն և համագործակցություն Հարավային Կովկասի երկրներում՝ առավել լավ կյանքի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Ծրագրի խորհրդատու Կարեն Հովհաննիսյանը մանրամասնորեն ներկայացրեց ուղեցույցը, որից հետո քննարկվեցին դրանում տեղ գտած թեմաները: Հանդիպման մասնակիցներին տրամադրվեցին գրքույկի օրինակներ:

Քաղաքացու ուղեցույցը կուղղորդի փաստացի և պոտենցիալ Էկոմիգրանտներին հետևյալ հարցերի վերաբերյալ՝ ովքեր են Էկոմիգրանտները, որոնք են նրանց իրավունքները պաշտպանող օրենքները, ուր և ինչպես նրանք կարող են դիմել օգնութ-

յան համար, որոնք են տեղական և կենտրոնական մակարդակներում Էկոմիգրացիայի կառավարման կարգավորման հարցերով զբաղվող կառույցները, հանրային տեղեկատվության հասանելիությունը:

Ծրագիրը մեկնարկել է 2013թ. մայիսին և տևելու է մինչև 2015թ. օգոստոսը: Այն իրականացվում է Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ի և Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի կողմից՝ Եվրամիության ֆինանսավորմամբ:

Ծրագրի գերնպատակն է՝ աջակցել Հարավային Կովկասի երկրներում Էկոմիգրացիայի ոլորտում բարեփոխումների հաջող իրականացմանը՝ քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման և ընդգրկուն բազմաշահառու երկխոսության ամրապնդման միջոցով՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում:

Թիրախային համայնքներն են Լոռու և Տավուշի մարզերը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ՀՀ Սյունիքի մարզում, վերջին տարիներին, պետական բյուջեի, միջազգային կազմակերպությունների և ֆինանսական այլ աղբյուրների միջոցով, իրականացվել են գյուղատնտեսության աջակցության մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ պետական բյուջեից, ոռոգման համակարգում վերակառուցման և հիմնանորոգման նպատակով, կատարվել է շուրջ 235 մլն դրամի, իսկ միջազգային կազմակերպությունների կողմից՝ շուրջ 154,7 մլն դրամի ներդրում:

«Դանդի Փրիշու Մենթալս Կապան» ՓԲԸ-ի կողմից 2014թ., Աճանան և Նորաշենիկ համայնքներում, իրականացվել է ջրի խողովակաշարի անցկացման 5,2 մլն դրամի ներդրումային ծրագիր: Իսկ Շվեյցարիայի գարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, դեռևս 2010թ. հաստատվել է 2014թ., «CARD»-ի միջոցով շարունակվել է իրականացվել «Շուկաներ Մեդրիի համար» ծրագիրը, որի շրջանակներում, այգեգործության զարգացման և շուկաները հասանելի դարձնելու նպատակով, ԱԳԶԿ հիմնադրամը ծախսել է մոտավորապես 123 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված ֆերմերների վկայությամբ, այն ապահովել է մեծ արդյունավետություն: «Ռազմավարական զարգացման գործակալություն» հ/կ-ի կողմից, 2014թ., «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում, տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի

անասնաբուժական ծառայությանը» ծրագրի շրջանակներում, կատարվել է 330 հազար դրամի ներդրում: «Կորլո վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից, 2014թ., շուրջ 25 համայնքներում, իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց ներդրումային արժեքը կազմել է 25,7 մլն դրամ: Տրամադրվել է միևնույն տրակտոր, փոքր ջերմոցներ, իրականացվել է մեղվաբուծության զարգացման ծրագիր, հիմնվել է հատապտղային տնկարան, նորոգվել է ջրամատակարարման ցանց, բրդի լվացման կետ, աջակցություն է ցուցաբերվել մի քանի ընտանիքների և այլն: Բացի այդ, մասնագիտական գիտելիքների հարստացման նպատակով, կազմակերպվել են դասընթացներ, միջոցառումներ, հանրագումարներ և կլոր սեղաններ: «Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից տարածաշրջանի համայնքներին բաշխվել է 480 հազար դրամի սերմացու:

«Գյուղատնտեսական տեխնիկական հիմնականում մաշված է, լուրջ հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակալային արդիականացումը: 2014թ. գյուղատնտեսական աշխատանքներին և բերքահավաքին մասնակցել է մարզում

առկա տեխնիկայի 80 %-ը: Թերևս, նախորդ տարիների համեմատությամբ, գյուղատնտեսական տեխնիկայի քանակությունն ավելացել է»,- ասում է մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը: Նրա հավաստիացմամբ,



անհրաժեշտ ուշադրություն է դարձվել նաև բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, ցուցաբերվել աջակցություն բնապահպանական օրենսդրության կատարմանը, արգելանոցների և արգելավայրերի պահպանմանը և օգտագործմանը, ապահովել համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների և մարզի «Օրիոն» բնապահպանական տեղեկատվական հասարակական կենտրոնների հետ: Աջակցություն է ցուցաբերվել

նաև «Չանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կենսաբազմազանության ապահովման և կայուն զարգացման ծրագրերին: Մարզում սկսվել է «Շիկահողի զարգացման ծրագիր» պիլոտային փուլը: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 8,25 մլն եվրո, իսկ ծրագրի իրականացման մեկնարկը տրվել է 2015թ.: Վայրի բնության հիմնադրամի կողմից շարունակվում է իրականացվել «Խուստուփ» և «Չանգեզուր» արգելավայրերի զարգացման ծրագրերը: Այդ ուղղությամբ 2014թ.-ի ներդրումների չափը կազմել է շուրջ 28 մլն դրամ: Աշխատանքներ են տարվել մարզի ֆլորայի և ֆաունայի պահպանման և վերարտադրման, ինչպես նաև իրավախախտումների կանխման ուղղությամբ:

«Աշխատանքներ են տարվել նաև համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում ապօրինի ծառահատումների, աղբակույտերի և արտադրական թափոնների տեղափոխման ուղղությամբ: Տեղական ծրագրեր են մշակվել նաև գյուղական համայնքներում ծառատնկումների կազմակերպման, փողոցների մաքրման ուղղությամբ: Համատեղ իրականացված ստուգայցերի արդյունքում, համայնքների ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման խախտումներ չեն արձանագրվել»,- նշում է Սամվել Թանգյանը:

Նրա տեղեկացմամբ, ապահովվել է նաև համագործակցությունը բնական պաշարների և ընդերքօգտագործման բնագավառում:

Նելլի Սահակյան

ՈՌՈԳՈՒՄ

ՆՈՐ ԶՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿԹԵԹԵՎԱՅՆԻ ՀՈԳՄԸ

Հանրապետությունում 2003թ. հիմնադրված ջրօգտագործողների ընկերությունները՝ ՋՕԸ-երը, աշխատանքներ են իրականացնում՝ բնակչությանը ոռոգման ջրով ապահովելու ուղղությամբ:



«Վեդի» ՋՕԸ-ն ոռոգման ջրի մատակարարման աշխատանքներ է իրականացնում Արարատի տարածաշրջանի հողատարածքների գրեթե կեսում: Այդ աշխատանքները հիմնադրման օրվանից ղեկավարում է Մարտիկ Առաքելյանը:

Մասնագիտությամբ իրավաբան Մ. Առաքելյանը Գոռավան գյուղից է, աշխատել է իրավապահ մարմիններում, իսկ 1999 թ. ընտրվել է Գոռավան համայնքի ղեկավար, 2003 թ.-ից «Վեդի» ՋՕԸ-ի գործադիր տնօրենն է:

2015 թ. մարտի 1-ից ընկերությունը պատրաստակամ իրականացրել է ոռոգման ջրով ապահովելու գործընթացը. կատարվել են նաև մաքրման, վերանորոգման աշխատանքներ:

Մարտ ամսին բնակչությունը ավելի քիչ քանակությամբ ջուր է օգտագործել, քանի որ այդ օրերին ջրի մատակարարումը կատարվել է կես հզորությամբ, իսկ հուլիս-օգոստոս ամիսներին համեմատաբար քիչ քանակությամբ է ոռոգման ջուր է հասնում բնակչությանը: Այդ խնդիրը բացատրվում է աշխարհագրական դիրքով. Վեդի քաղաքում ՋՕԸ-ը գտնվում է ոռոգման համակարգի վերջնամասում, որքան էլ ճիշտ բաշխվի ջուրը, միևնույն է, ամառվա շոգ ամիսներին, ջուրը քիչ է հասնում, պատճառը՝ մաշված ջրագծերն ու ջրի գոլորշիացումն է: Ամառվա շոգ ամիսներին, ոռոգման ջրի պակասի դեպքում, ջրառը քիչ քանակությամբ ջուր վերցնում է Արաքս գետից:

«Վեդի» ՋՕԸ-ի աշխատակազմը մեծ հույսեր է կապում Վեդի գետի վրա կառուցվող նոր ջրամբարի հետ, ներկայումս իրականացվում են նախագծման աշխատանքներ: Նոր ջրամբարի կառուցմամբ՝ կլուծվեն վերը նշված խնդիրները: Իսկ խողովակների, 80-ական թվականներին կառուցված պոմպակայաններում տեղադրված պոմպերի վերանորոգման անհրաժեշտությունն արդեն զգացվում է:

Չրոյցի ավարտին՝ ՋՕԸ-ի հիմնադիր տնօրեն Մ. Առաքելյանը նշեց. «Ցանկությունս մեկն է, որ մեր հանրապետությունն այնքան ապահովված լինի, որ ոռոգման նորմատիվային ջուրն (որոշակի քանակությամբ) անվճար տրվեր բնակչությանը, շապիլու դեպքում՝ մի քանի անգամ ավել վճարելու պայմանով»:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԵՍԱՑԱՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ

Վերջերս կայացած գիտական խորհրդի նիստում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ռեկտոր Ա. Թարվերդյանին, հանդիսավոր պայմաններում, հանձնեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից շնորհված պետական հավատարմագրման վկայականը:

Հիշեցնենք, որ մարտի 21-ին տեղի էր ունեցել, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ի հավատարմագրման և հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովի որոշմամբ՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանին շնորհվել էր ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով:

Համաձայն հավատարմագրման կարգի՝ ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացն իրականացվում է երեք հաջորդական փուլերով: Առաջին փուլը՝ ինքնավերլուծության զեկույցի պատրաստումն էր, որն իրագործվել էր դեռևս 2012 թ.: Հաջորդ քայլը՝ փորձագիտական այցն էր, որին էլ հաջորդել էր փորձագիտա-

կան զեկույցը: Վերջին 2 տարիներին համալսարանում իրականացվել են փորձագիտական խմբի խորհրդատվություններին ու առաջարկություններին համապատասխան և ենթակառուցվածքային կարողությունների շարունակական բարելավմանն ուղղված հավատարմագրման բոլոր չափանիշներին համապատասխան անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաև մշակվել, հաստատվել և գործու-



ղության մեջ են դրվել անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթեր: Ելնելով զեկույցում նշված բոլոր դիտողություններից և առաջարկություններից՝ մշակվել է համալսարանի կարողությունների զարգացման պլան-ժամանակացույց, որն, ըստ փորձագետների, ոչ ռիսկային և իրատեսական է:

www. anau. am

ՌԻՍԻՆՈՒՄ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ՝ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

«Կովկասում գյուղական համայնքների կանանց կարողությունների զարգացումը՝ կայուն գյուղատնտեսության ապահովման համար» ծրագրի շրջանակներում, օրերս Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության մասնագետներն աշխատանքային հանդիպում ունեցան Շիրակի մարզի Ողջի, Բյուրակն և Արեգնադեմ համայնքների կանանց խորհրդի անդամների հետ:

Յանդիպման նպատակը՝ վայրի բույսերի և դեղաբույսերի հավաքման, չորացման և փաթեթավորման գործընթացների կազմակերպման վերաբերյալ ուսուցումն էր:



Թեմաներից մեկը վերաբերում էր վայրի օգտակար բույսերի ճանաչողությանը, տարածվածությանը Յայաստանում, մասնավորապես՝ Շիրակի մարզում: Անդրադարձներ եղան նաև վայրի թունավոր բուսատեսակներին, որոնք տարածված են Շիրակում: Առաջարկվեց խուսափել վերջիններիս օգտագործումից՝ անցանկալի հետևանքներից զերծ մնալու նպատակով: Թեմաները ներկայացնում էր «Կանաչ արահետ» ՅԿ-ի նախագահ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Նունե Սարուխանյանը: Մասնակիցներն առանձնակի հետաքրքրությամբ ունկնդրեցին «Վայրի օգտակար բույսերի կայուն հավաքման, չորացման և պահպանման տեխնոլոգիաները», «Վայրի օգտակար բույսերը՝ որպես սնունդ և դեղամիջոց» թեմաներով դասախոսությունները:

«Ընդհանուր առմամբ, Յայաստանի տարածքում աճող 3600 բուսատեսակների կեսից ավելին ունեն բուժական նշանակություն, որոնցից մեր հանրապետությունում կիրառվում են 250-ը՝ ոչ միայն որպես դեղամիջոց, այլ նաև՝ որպես սնունդ: Բացի այդ, Յայաստանում աճող բուսատեսակներից շուրջ 200-ը էնդեմիկ են, աճում են միայն Յայաստանում: 2010 թ. տպագրված Կարմիր գրքում ներառված են 452 բույսերի և 40 սնկերի տեսակներ, որոնց թվում են անհետացող՝ 60 և առավել վտանգված՝ 249 տեսակի բույսեր: Կարմիր

գրքում նշված բույսերի քանակը տարեցտարի ավելանում է, որի պատճառներից մեկը մարդու կողմից դրանց անխնայ և չհամակարգված օգտագործումն է»,- նշում է տիկին Սարուխանյանը: Որպես օրգանական գյուղատնտեսության խորհրդատու, նա հանգամանակից անդրադարձավ նաև գյուղատնտեսական այդ ճյուղին, մեծ պահանջարկ ունեցող օրգանական արտադրանքի շուկայի ձևավորմանն ու կատարելագործմանը: Առանձնակի կարևորվեցին արտադրանքի ժամանակակից փաթեթավորման, ժամկետների պահպանման խնդիրները:

«Ոչ պակաս կարևոր են

նաև շփումներն ու բարեկիրթ մոտեցումը հաճախորդների հետ: Ձեր սիրալիր վերաբերմունքի շնորհիվ, հաճախորդների թվաքանակը կավելանա: Աշխատեք ընդլայնել շուկան», - իր խոսքը եզրափակում է Նունե Սարուխանյանը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ՝ Hilfswek կազմակերպության կողմից՝ Կրաստանում համագործակցելով Յարավային Կովկասի բնապահպանական ՅԿ-երի ցանցի (CENN) և Յայաստանում «Կանաչ արահետի» հետ: Ի դեպ, կանանց խորհրդի անդամներն առաջիկայում իրենց արտադրատեսակները կներկայացնեն ցուցահանդեսներում: Մասնակիցների վկայությամբ, նման ուսուցումներն օգնում են պատշաճ մակարդակով ներկայանալու և ամենախստապահանջ հաճախորդների պահանջարկը բավարարելու գործընթացին:

Ուսուցման մասնակիցներին բաժանվեցին խորհրդատվական թերթիկներ, մասնագիտական գրականություն, ինչպես նաև «Յայաստանի Յանրապետությունում տարածված բույսերի մի շարք կարևորագույն ցեղերի և տեսակների, դրանց օգտակար նշանակության, հավաքման, մշակման և պահպանման տեղեկատու», որը կազմվել է երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում:

Նելլի Սահակյան

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

# ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԱՐԴՅՈՒՆՔ

**Հայրնի է, որ գյուղատնտեսությունը ջրային ռեսուրսների ամենամեծ սպառողն է. փաթեթեր երկրներ իրենց այդ արժեքավոր ռեսուրսի 2/3-ից 3/4-ը ծախսում են մարդկության համար այդքան կարևոր բնագավառում: Հաջորդ մեծածավալ ռեսուրսը, որ ծախսվում է գյուղատնտեսությունում, էներգիան է, քանի որ աշխարհում օգտագործվող էներգիան գնալով «կանաչում» է, և վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիան ավելի գերադասելի է դառնում, քան հանքային աղբյուրներից ստացվողը, գյուղատնտեսությունը հեղուկացրել է դառնում է ոչ միայն էներգիա սպառող, այլև՝ արտադրող բնագավառ, ինչն ինքնին ոլորտի զարգացման ապացույց կարող է հանդիսանալ: Այն տեսակետը, որ երևույթը կբերի անհավասար մրցակցային պայմանների և կվրանգի սննդամթերքի արտադրությանը, որն էլ քննադատության դիմանալ չի կարող, քանի որ կամ օգտագործվում են մշակաբույսի այլ մասեր, որոնք պիտանի չեն սննդի և անասնակերի համար, կամ էներգետիկայի համար օգտագործվող մշակաբույսերը զուգահեռաբար կարելի է կիրառել, այլ նպատակների համար, օրինակ անասնակերի կամ պարարտացման: Երկու դեպքում էլ աշխարհում է գյուղատնտեսության դիվերսիֆիկացման ուղի կանոնը:**

Բոլոր «կանաչ» վառելանյութերից ջրածինն ամենազերադասելին է. այն կարող է օգտագործվել թե ներքին այրման շարժիչներում, թե որպես վառելանյութ այլ էներգետիկ համակարգերում: Բոլոր դեպքերում այն գործնականում չի առաջացնում ջերմոցային գազեր: Սակայն մինչ այժմ նրա արտադրական ծախսերն ավելին են եղել, քան, օրինակ՝ բենզինինը, որի պատճառով ջրածինը հիմա էլ շարունակում են ստանալ՝ որքանով էլ դա անտրամաբանական է, վառելանյութի հանածո տեսակներից:

Եվ ահա այս պայմաններում Վիրջինիայի Տեխնոլոգիական համալսարանի գիտնականներն արմատական փոփոխություն են մտցնում ստեղծված իրավիճակում: Նրանց հաջողվել է մշակել այնպիսի կենսաբանական տեխնոլոգիա, որով ավելի արագ, էժան և մաքուր ջրածին է ստացվում եգիպտացորենի վերամշակման թափոններից: Օգտագործելով ցելուլոզից գլյուկոզ ստանալու իրենց նախորդ փորձը, հետազոտական թիմը, գործընթացն իրականացնող ֆերմենտների հաջորդական շղթան առավելագույնս արդյունավետ գործարկելու համար, հատուկ մշակել է գենետիկական ալգորիթմների փաթեթ՝ համապատասխան ֆերմենտատիվ ռեակցիաների համար, որով առանձին փուլերի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում: Դրա շնորհիվ հնարավոր է դարձել գործընթացում միանգամից ներգրավել համակարգում առկա 2 շաքարներ՝ գլյուկոզան ու քսիլոզը, որոնցից մինչ այդ միայն մեկը կամ մյուսն է գործել, և որի արդյունքում էապես արագացվել է ջրածնի ստացման գումարային ռեակցիան: Հաջողության ևս մեկ՝ ոչ պակաս կարևորության գրավականն այն է, որ խնդրի ընդհանուր լուծումը հնարավոր է դարձել արդյունավետ միկրոօրգանիզմների համակարգի կիրառման շնորհիվ, որն առնվազն մեկ կարգով ավելի արդյունավետ է, քան մինչ այդ կիրառվող համակարգը:

Այստեղից բխող բոլոր տնտեսական համալիր արդյունավետությամբ ջրածնի ստացման արդյունավետության գրեթե եռապատիկ աճը հնարավորություն է տվել էապես կրճատել ար-

տադրական հզորությունները: Արդյունքում՝ մեծ կապիտալ ներդրումներ պահանջող արտադրությունը փոքրացվել է գրեթե մինչև ավտոլցակայանի չափերի և պարզության: Մեկօրյա փուլով գործող կենսատեխնոլոգիական ընթացքը հնարավորություն է տալիս բարձրորակ, էժան, մատչելի, օպերատիվ գործող ջրածնի արտադրության ցանց ստեղծել երկրով մեկ, ինչը, ցանցի հնարավորինս ընդլայնման դեպքում, չափազանց լուրջ նախադրյալներ է ստեղծում հանածո վառելանյութերը երկրագնդի ճանապարհներից վերացնելու համար:

Այս փայլուն, հաջողությամբ պսակված պատմությունը ևս երկու առումով է հիշարժան: Նախ այն, որ հետազոտություններն ու դրանց կիրառական փուլն իրականացվել են Ազգային գիտական հիմնադրամի միջոցներով, իսկ հետազոտողներից մի քանիսը հնարավորություն են ունեցել ստեղծելու հետազոտության արդյունքներն առավել արագ կյանքի կոչելու առևտրային ձեռնարկություն: Ստացվում է, որ մեծ ակտիվություն ու զգալի ներդրումներ է իրականացրել այս ծրագրում ավանդական վառելանյութերի շուկայի կարևոր դերակատարներից մեկը՝ Shell ընկերությունը, որը շահեկանորեն տարբերվելով նման պարագաներում մրցակցության դիրքերից խանգարողի դերում հանդես եկողից, ինչպես և պետք է լինի քաղաքակիրթ միջավայրում, նպաստել է առաջադիմական ծրագրին. այսպիսով վաճառվել է իր առաջատար լինելու փաստը:

Նույն բնագավառի մեկ այլ հանրաճանաչ մասնակից՝ Audi ընկերությունը, որ ավտոմոբիլ-



լաշինության առաջատարներից է, ձեռնամուխ է եղել, կարելի է ասել ոչ մի բանից վառելանյութ ստանալ, որն արդեն անվանել է «կապույտ նավթ»: Քամու և արևի էներգիան սկզբում վերածվում է էլեկտրաէներգիայի, որը, էլեկտրոլիզի ենթարկելով ջուրը, ջրածին է առաջացնում, որն այնուհետ փոխազդում է CO<sub>2</sub>-ի հետ: Արդյունքում առաջանում է շղթայի տարբեր երկարությամբ ածխաջրային մոլեկուլներից բաղկացած արհեստական դիզելային վառելանյութ, որը, հանածո վառելանյութի համեմատությամբ, ունի բացահայտ առավելություններ, չի պարունակում յուղեր և ծծմբային միացություններ, որոնք արտաքին միջավայրի ամենատարածված աղտոտիչներն են: Դրա հետ մեկտեղ, արհեստական դիզելային վառելանյութով աշխատող շարժիչները գործում են ավելի անաղմուկ:

Շատ հավանական է, որ առայժմ իրարից անկախ գործող այս 2 ծրագրերի համագործակցությունն էլ ավելի խոստումնալից արդյունքների հանգեցնի:

ՇՐԱԳԻՐ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՍԵՓԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սյունիքի մարզի հեռավոր անկյուններից մեկում ծվարած Տոբոլիցի համայնքը գտնվում է Սիսիան քաղաքից մոտ 20 կմ հեռավորության վրա: Ներկայումս համայնքն ունի 30 ծուխ և 80-ից ավելի բնակչություն, որը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ:

Քառասունհինգամյա Սվետա Կարապետյանը ծնվել է Սյունիքի մարզի Գետաթաղ համայնքում, մասնագիտությամբ դերձակուհի է: Որոշ ժամանակ աշխատել է Սիսիանի տրիկոտաժի ֆաբրիկայում, սակայն 90-ականներին, երբ ֆաբրիկան գործունեությունը դադարեցրել է, նա իր միակ որդու հետ տեղափոխվում է Սիսիանի տարածաշրջանի Տոբոլիցի համայնք: «Սկզբնական շրջանում շատ դժվար էր. ապրուստի միջոց հայթայթելու համար կատարել էմ զանազան գյուղատնտեսական աշխատանքներ. անհատների ֆերմաներում աշխատել էմ որպես կթվորուհի, զբաղվել հողի մշակությամբ և հովվությամբ: 1996 թվականից ստեղծել էմ իմ սեփական տնտեսությունը, հիմնականում այծաբուծությամբ և ոչխարաբուծությամբ եմ զբաղվում, դրանով էլ հոգում եմ ընտանիքիս կարիքները», - անկեղծաբանում է տիկին Սվետան:

Ֆերմայի կառավարումն ու գյուղատնտեսական աշխատանքները նա է կատարում, իսկ որդին զբաղվում է հովվությամբ: Վերջերս որոշում են կայացրել տնտեսությունը զարգացնել հիմնականում երկու ճյուղերով՝ տավարաբուծությամբ և ոչխարաբուծությամբ՝ համոզված, որ դրանք ընտանիքին մեծ եկամուտ կապահովեն:

«Տարիների ընթացքում զարգացրել եմ սեփական տնտեսությունս: Ներկայումս ունեմ 9 խոշոր, 45 մանր եղջերավոր անասուն և 30-ից ավելի թռչուն, 2 ձի, 2 մտրուկ, ինչպես նաև 5 հա հողատարածք, որից՝ 2 հա-ը ձեռք եմ բերել 2013-ին: Զբաղվում եմ նաև բանջարանոցային մշակաբույսերի մշակությամբ», - նշում է Ֆերմերը:

Անասնաբուծությունից ստացված մսից ու կաթից է ձևավորվում ընտանիքի հիմնական եկամուտը, մի մասն էլ կազմում են՝ դաշտավարությունից, բանջարաբուստանային մշակաբույսերի և անասնակերի վաճառքից ստացված եկամուտները: Գյուղատնտեսության մեջ նա և նրա անասնաբուծության ընդհանուր եկամուտները նախորդ տարի կազմել են շուրջ 3 մլն դրամ:



Սվետա Կարապետյանը «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ԴԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի մասնակից է: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոյի Զամադաշնության զարգացման և համագործակցության գործակալության կողմից: «Ներկայումս ընդգրկված եմ ծրագրի շրջանակներում իրականացվող «Կանանց գլխավորությամբ ընտանիքների ֆերմերային տնտեսությունների կարողությունների և հմտությունների զարգացում» ենթաֆուլիցում, որի նպատակն է զարգացնել կանանց կարողություններն անասնապահության և ձեռներեցության ոլորտներում», - հավելում է Ս. Կարապետյանը, ում թեկնածությունը «Գյուղատնտեսության արտադրող կին հերոս-2014» մրցանակաբաշխությանը ներկայացրել էր հենց «Ռազմավարական զարգացման գործակալություն» ԴԿ-ն:

Ծրագրի աջակցությամբ տիկին Կարապետյանն ավելացրել է կենդանիների գլխաքանակը և անասնակերի արտադրության ծավալները սեփական տնտեսությունում: Դրանից զատ սկսել է զբաղվել նաև բարձրարժեք կերային մշակաբույսերի (կորնգան, կերի ճակնդեղ, առվույտ և այլն) մշակությամբ:

Նա ընդգրկված է նաև «Վորլդ Վիժն» ՄԲ հայաստանյան գրասենյակի կողմից համայնքում ստեղծված ակտիվ կանանց խմբում (համայնքից՝ 6 կին), որի շրջանակներում էլ մասնակցել է մի շարք ցուցահանդեսների՝ գյուղական խոհանոցի ճաշատեսակների և հմուտ ձեռքերի, փորձի փոխանցում, որոնց արդյունքում արժանացել է շնորհակալագրերի և այլ մրցանակների:

Կին ֆերմերի հետագա ծրագրերը խոստովանելից են և իրատեսական, ինչպես ինքն է նշում. «Նախատեսում եմ ֆերմայում կթու կովերի գլխաքանակն ավելացնել՝ հասցնելով 20-ի, ոչխարի գլխաքանակը՝ 100-ի, քանի որ համայնքում անասնապահությամբ զբաղվելու բոլոր բարենպաստ պայմաններն առկա են: Գաղտնիք չէ նաև, որ այն եկամտաբեր ճյուղ է գյուղատնտեսության համար»:

Լիլիթ Պետրոսյան  
«Ռազմավարական զարգացման գործակալություն» ԴԿ

## ԿԱՆԱՅ ՊԱՐԱՐՄԱՆՅՈՒԹ

### ՀԱՐՍՏԱՑՆԵԼ ՀՈՂԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ

Կանաչ պարարտացման կիրառումը թույլ է տալիս հեղուկ այն կանոնին, որ պեղք չէ թողնել հողն առանց բուսական ծածկոցի, այլ պեղք է աճեցնել սիդերատներ հեղուկ կամ էլ՝ հիմնական մշակաբույսերի միջակայքում: Կանաչ պարարտացումը հողի բերրիության բարձրացման արդյունավետ միջոցներից մեկն է: Կանաչ պարարտացման արդյունավետությունը գրեթե այնպիսին է, ինչպիսին՝ գոմաղբին: Դրա պարզապես՝ որպես սիդերատ օգտագործվող բույսերի կանաչ զանգվածում սննդաբար պարրերի բարձր պարունակությունն է և բակլազգի մշակաբույսերի ունակությունը՝ կուտակել մթնոլորտային ազոտը: Կանաչ պարարտացման հիմնական նպատակն է՝ հարստացնել հողն օրգանական նյութերով և ազոտով: Կանաչ պարարտացումը հողի հարկությունների վրա թողնում է բազմակողմանի ազդեցություն:

1. Լավանում է հողի ֆիզիկաքիմիական բաղադրությունը:



2. Սիդերատների կանաչ զանգվածի խիտ ծածկույթը, միևնույն ժամանակ, «կենդանի» մուլ է, պաշտպանում է հողի վերին շերտը փոշիացումից, նաև՝ մշակաբույսերի աճեցման ու հողի հաճախակի մշակման ժամանակ, օրգանական նյութի հանքայնացումից:

3. Բարձրանում է հողի օգտակար միկրոօրգանիզմների ակտիվությունը: Վերջիններիս կենսագործունեության արդյունքում, բուսական մնացորդները քայքայվում և վեր են ածվում հումուսի, որը հանդիպում է միայն հողում, համարվում է հողի բերրիության հիմքն ու լավ բերքի երաշխիքը:

4. Բարձրանում է հողի բերրիությունը, հատկապես՝ հումուսով աղքատ, ավազային հողերում՝ հումուսի կուտակման շնորհիվ: Բակլազգի սիդերատների կանաչ զանգվածը հարուստ է ազոտով և օրգանական նյութերով:

5. Սիդերատները կարևոր դեր են խաղում ցանքաշրջանառության մեջ: Դա թույլ է տալիս հողում պահպանել օրգանական և հանքային նյութերի հավասարակշռությունը:

6. Կանաչ պարարտացումը նաև մաքրող դեր են կատարում: Նկատվում է մոլխոտների զգալի կրճատում: Կանաչ պարարտացումից հետո, մշակված կարտոֆիլն ավելի քիչ է տուժում կոլորադայան բզեզից:

7. Սիդերատների կերային նշանակությունը ընտանի կենդանիների համար որոշվում է՝ կերարտադրությունում դրանց լայն օգտագործմամբ:

8. Հողի ջերմաստիճանի իջեցում: Հողի վերին փուխը շերտը օրվա ընթացքում արագ տաքանում է և կորցնում խոնավությունը: Այն արագ սառնում է, այսինքն՝ առանց բուսական ծածկույթի հողի ջերմաստիճանային ռեժիմը հավասարակշռված չէ:

Սիդերատների բուսական ծածկույթը, ինչպես նաև՝ մուլապատումը, օրվա ընթացքում, ապահովում այն հողի խոնավությունն ու սառնությունը և պահպանում գիշերը ցրտահարությունից:

## ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԴԱՍԸՆԹԱՑ ԶԵՐՄԱՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի և Ասիական զարգացման բանկի համատեղ ծրագրի շրջանակում, ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի «Ջերմատներ» ընկերությունում իրականացվել է «Ջերմոցների կառուցում, ջերմատներում բանջարեղենի և ծաղիկների աճեցում» թեմայով տեխնոլոգիական դասընթաց: Դասընթացին մասնակցում էին Վայոց ձորի և Արարատի մարզերի 17 գործարարներ:

Դասընթացի նպատակն էր՝ մասնակիցներին ներկայացնել ջերմոցների կառուցման, ջերմատներում բանջարեղենների, մշակաբույսերի և ծաղիկների աճեցման, մշակման տեխնոլոգիաները:

Գործարարներին տրամադրվեց ամբողջական տեղեկատվություն՝ նախագծվող, պատրաստվող և տեղադրվող ջերմոցների յուրահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև գործնականում ծանոթացան, թե ինչպես են կառուցվում և ինչ առավելություններ ունեն դրանք, ներկայացվեցին նաև տարբեր տեսակի ջերմատների գներն ու առաջարկվող ծառայությունները:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ծիրանենու և դեղձենու առավել փարածված հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի միջոցառումները

Հանրապետության փարբեր մարզերում ծիրանենու հիվանդություններից առավել փարածված է կորիզավորների ծակոպկեն բժավորությունը, որով վարակվում են բոլոր կորիզավորների վերգետնյա օրգանները: Տերևների վրա վարակն արտահայտվում է կլոր բծերի տեսքով: Հարկապես ուժեղ են վարակվում ծիրանենու պտուղները, որոնք վրա սկզբում առաջանում են կարմրագորշավուն մանր կեղևանման բծեր. հետագայում բծերը մեծանում են մինչև 3 մմ փրամագծով, ապա ընդունում են գորտնուկի տեսք: Պայքարի միջոցառումները:

Աշնանը, տերևաթափից հետո, կտրել, այգուց դուրս հա-

խորհուրդ է տրվում պղինձ պարունակող պատրաստուկներն (բորոլոյան հեղուկ, պղնձարջասպ, պղնձի օքսիքլորիդ, կուպրոքսատ և այլն) օգտագործել աշնանը, որն ավելի արդյունավետ է, իսկ գարնանը՝ բողբոջների ուռչման փուլում: Վեգետացիայի ընթացքում այգին սրսկել կուրգատով (2,5 կգ/հա), շատ արդյունավետ է նաև տասպան (0,3 լ/հա), տոպազ (0,4 լ/հա) + սկր (0,2 լ/հա) լուծույթների խառնուրդներով կատարվող սրսկումները:

Ծիրանենու վնասատուներից առավել վտանգավոր է շերտավոր պտղացեցը:

Վնասում է ծիրանենուն, դեղձենուն, սալորենուն ինչպես նաև մի շարք այլ պտղատեսակների (նշենի, խնձորենի, արքայանարնջենի և այլն): Թրթուրները վնասում են դալար շվերը, կրծելով մտնում են նրանց մեջ, սնվում և երկայնական անցքեր բացում այդտեղ, որի արդյունքում վնասված մասից վերև շիվը չորանում է: Թրթուրները սնվում են նաև պտուղներով՝ կտրուկ գցելով դրանց ապրանքային տեսքը և որակը: Վնասված պտուղներից խեղձ է դուրս գալիս:

Պայքարի միջոցառումները

Վնասատուի դեմ խորհուրդ է տրվում հերթափոխելով օգտագործել պրոտեոս (0,7 լ/հա), սպինտոր (0,25 լ/հա), ամպլիգո

(0,3 լ/հա), կարատե զեոն (0,4 լ/հա) կամ վոլիամ տարգո (0,7 լ/հա) միջատասպանները: Անհրաժեշտության դեպքում պայքարը կրկնել 15-20 օր հետո:

Դեղձենու հիմնական հիվանդություններից լայնորեն տարածված են.

1. Դեղձենու տերևների գանգրոտությունը:

Վաղ գարնանը վարակվում են տերևները, միամյա շվերը, որոնք ենթարկվում են ձևափոխության: Տերևները դառնում են

ուռչելը, բորոլոյան հեղուկի 3%-ոց, կամ պղնձարջասպի 0.5%-ոց, կամ էլ պղնձի օքսիքլորիդի 0.3-0.4%-ոց լուծույթներով սրսկումները, իսկ վեգետացիայի ընթացքում հարկավոր է նույն այգին սրսկել դելանի (0,7-1,0 կգ/հա) կամ սկորի (0,2 լ/հա) լուծույթներով: Պատրաստուկները՝ ըստ անհրաժեշտության, սրսկել հերթափոխով:

2. Դեղձենու արագորը:

Վարակվում են տերևները, շվերը և պտուղները: Վարակված օրգանների վրա առաջանում է սպիտակ, թաղիքանման փառ: Հիվանդ շվի աճը հետ է մնում, այն ծոմովում է, իսկ վերին մասը՝ չորանում:

Առավել մեծ ու զգալի է վնասը, երբ վարակվում են պտուղները, դրանք կորցնում են համային հատկանիշները, դառնում են վարակընկալ պտղափոման նկատմամբ:

Պայքարի միջոցառումները

Այս հիվանդության դեմ, պայքարի նպատակով, վաղ գարնանն անհրաժեշտ է կտրել, հեռացնել այգուց վարակված շվերը և բուսական մնացորդները: Քիմիական պայքարը պետք է կատարել ըստ անհրաժեշտության՝ բայետոնի կամ տոպազի 0.8-1.0 կգ/լ/հա, կամ ռուբիգանի 0.6-0.8 լ/հա, կամ էլ ստորբիի (0,2 կգ/հա)

լուծույթներով: Պետք է կատարել ճիշտ պարարտացում, կարգավորել այգու ոռոգման ռեժիմը:

Ինչպես կորիզավոր, այնպես էլ հնդավոր մշակաբույսերին մեծ վնաս է պատճառում արևելյան պտղակերը, սակայն առավել ուժեղ տուժում է դեղձենին, որի վրա առաջին վնասված շվերն ի հայտ են գալիս հենց առաջին սերնդի թրթուրների դուրս գալուց: Երբ շվերը կոշտանում են և սնվելու համար դառնում ոչ պիտանի, հաջորդ սերնդի թրթուրները սնվում են պտուղներով: Առաջին վնասված պտուղները հայտնվում են հուլիսի սկզբներին: Թրթուրների ներթափանցման մասում նկատվում են արտաթորանքներ և բույսի կողմից արտադրած բուսախեժ:

Պայքարի միջոցառումները

Վնասատուի դեմ պայքարում՝ հերթափոխելով, անհրաժեշտ է օգտագործել պրոտեոս (0,7 լ/հա), սպինտոր (0,25 լ/հա), ամպլիգո (0,3 լ/հա) կամ վոլիամ տարգո (0,7 լ/հա) միջատասպանները: Անհրաժեշտ է օգտագործել վերը նշված պատրաստուկները փոխելովիս և անպայման օրվա զով ժամերին, երբ տվյալ տարածքում քամին չկան, իսկ աշխատանքային լուծույթի ծախսը՝ 800-1000 լ/հա է:

Հրանտ Թերլեմեզյան

գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մննդի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության ԳԿ



նել կայրել վարակված շվերն ու ճյուղերը: Ամեն կերպ բարձրացնել ծառերի դիմացկունությունը, ժամանակին և ճիշտ պարարտացնել: Վաղ գարնանը ծառերի բները և կմախքային ճյուղերը սպիտակեցնել կրակաթի 20%-ոց լուծույթով:



հաստ և մսալի, չափերով շատ ավելի խոշոր առողջ տերևներից, մի տեսակ այլքավոր, գանգուր, կարմրագորշավարդագույն: Հետագայում տերևները գորշանում են, թափվում, իսկ շիվը ձևափոխվում և ծոմովում է:

Պայքարի միջոցառումները

Այս հիվանդության դեմ արդյունավետ են աշնանային (հոկտեմբերի 20-30-ը) կամ վաղ գարնանային՝ մինչև բողբոջների

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՋԵՐՄԱՏՆԵՐՈՒՄ

Աշխարհի բոլոր երկրներում, բոլոր ժողովուրդների համար ծաղիկը գեղեցկության խորհրդանիշ է: Մշակվող բազմաթիվ ծաղկաբույսերի շարքում մեխակը, վարդը և հերբերան զբաղեցնում են հատուկ տեղ: Ջերմասեր լինելու պատճառով, այս ծաղկաբույսերը մշակվում են հիմնականում ջերմատնային պայմաններում:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՂԻԿՆԵՐԻ ԱՃԻ և ՉԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Լույս - Ամենակարևոր գործոնն է, որը որոշիչ է բույսի աճի ու զարգացման համար: Մեխակը համարվում է երկար օրվա բույս: Օրվա երկար տևողություն և գիշերվա համեմատաբար ցածր ջերմաստիճանը նպաստում են ծաղիկների կազմավորմանը: Լույսի թույլ ինտենսիվության պայմաններում տերևների կազմավորման ընթացքը ձգձգվում է, իսկ ծաղիկներինը՝ դադարում: Ծաղիկների աճի և զարգացման համար պահանջվում է լավագույնը 15 հազար և նվազագույնը՝ 4 հազար լյուքս լուսավորություն:

Մեր հանրապետության ջերմատներում ծաղիկների, մասնավորապես՝ մեխակի, վարդի և հերբերայի մշակության ընթացքում կա երկու անբա-

րենպաստ շրջան: Նախ՝ ամռանը ջերմատներում (հատկապես՝ անգարային տիպի) ինտենսիվ լուսավորության և երկար օրվա տևողության առկայությունը պահանջում է կիրառել արհեստական ստվերացում: Ինտենսիվ լուսավորությունը բացասաբար է ազդում երիտասարդ բույսերի վրա: Երկրորդ՝ ձմռանը, լուսավորության ցածր ինտենսիվության պայմաններում, բույսի բնական ծաղկման համար հաճախ անհրաժեշտ է լինում օգտագործել լրացուցիչ լուսավորություն:

Ջերմություն - Ծաղիկների աճի ու զարգացման համար մեծ նշանակություն ունի օդի և հողի ջերմաստիճանը: Պետք է գիտենալ, որ բույսերի վեգետացիան ջերմատներում անցնում է օդի ջերմաստիճանի զգալի տատանումների պայմաններում: Ոչ տևական ժամանակով մեխակը կարող է դիմախալ նաև բացասական ջերմաստիճանի: Մեխակի համար լավագույնը համարվում է 18-20 °C ջերմաստիճանը: Ձմռանը ջերմաստիճանն անհրաժեշտ է ցերեկը պահել՝ 12-14, գիշերը՝ 10-12 °C, գարնանն ու աշնանը՝ 16-18 և 14-16 °C ջերմաստիճանի սահմաններում: Վարդի համար լավագույն ջերմաստիճանը 15-25 °C է: հերբերայինը՝ ամռանը, արևոտ եղանակին՝ 18-20 °C, իսկ ձմռանը՝ 24-25 °C ջերմաստիճանը:



Բարձր ջերմաստիճանը, զուգակցվելով օդի հարաբերական բարձր խոնավության հետ, նպաստում է սնկային և վիրուսային հիվանդությունների զարգացմանն ու տարածմանը:

Մեխակի համար շատ վտանգավոր են ցերեկվա և գիշերվա ընթացքում ջերմաստիճանի կտրուկ տատանումները, հատկապես՝ գարնանը: Նման պայմաններում կտրած ծաղիկների 50-70 տոկոսն ունի պայթած բաժակաթերթիկներ: Գարնանը նույն ազդեցությունն են թողնում նաև լույսի ինտենսիվության կտրուկ տատանումները:

Ծաղիկների մշակության ժամանակ հողի ջերմաստիճանն անհրաժեշտ է պահել 18-20 °C սահմաններում:

Չողի և օդի խոնավությունը - Մեխակը խոնավասեր մշակաբույս է, սակայն, չափից ավելի խոնավությունը, հատկապես՝ աշնան-ձմռան շրջանում, նպաստում է հիվանդությունների արագ տարածմանը, վատթարացնում հողագրուն-տի օդային ռեժիմը և դժվարացնում արմատային համակարգի աճը: Այդ պատճառով առաջարկվում են հաճախակի, բայց ոչ առատ ջրումները: Մեր պայմաններում, մեխակն ամռանն ընդունված է ջրել շաբաթը 2-3, անձրևոտ և ամպամած օրերին՝ շաբաթը 1 անգամ: Ձմռանը և աշնանը խիստ կրճատվում է ոռոգումների հաճախականությունը՝ ամիսը 2-3

անգամ: Ամռանը մեխակի համար հողի լավագույն խոնավությունը համարվում է սահմանային խոնավության 75-80 տոկոսը, իսկ հերբերայինը՝ 70 տոկոսը, որը աշնան-ձմեռային շրջանում համապատասխանաբար կազմում է՝ 70 և 60 տոկոս: Օդի հարաբերական խոնավության լավագույն և նորմալ համարվում է 60-70 տոկոսը, իսկ դրա հետագա իջեցումը նպաստում է բույսի արդյունավետ ճյուղավորության գործակցի՝ փոխարինող ընձյուղների քանակի նվազմանը: Ցածր ջերմաստիճանների դեպքում, սնկային հարուցիչներից գերծ պահելու նպատակով, օդի հարաբերական խոնավությունն անհրաժեշտ է պահել 50-60 տոկոսի սահմաններում:

ՀԵՏԱՔՈՔԻՆ Է...

Ծիծեռնախոտ

Ծիծեռնախոտով կամ չիտրոտերով դեղատոմսերը ժողովրդական բժշկության մեջ հայտնի են շարժական Ժամանակներից: Ավիգենան ծիծեռնախոտը դասում էր այն բույսերի շարքին, որոնք ունակ են օրգանիզմը մաքրել:



Ավիգենայի դեղատոմսերի մեջ ծիծեռնախոտով պատրաստուկներ կան՝ նախատեսված ատամնացավի, աչքի բիբի վրայի սպիտակ հատի, դեղնախտի և այլ հիվանդությունների համար:

Հին Հռոմի դեղագործության հայտնի հիմնադիր Կլավդիոս Գալենն իր բժշկության մեջ մեծ տեղ է հատկացրել ծիծեռնախոտին՝ դրանով բուժելով դեղնախտը: Ռուսաստանում ծիծեռնախոտը տարբեր անվանումներ ունի՝ բորոգավոչնիկ, լաստովիչնիկ, գլադուչնիկ, կորովյա տրավա, ժիվոկոստ, գորչիցա, չիտոստիլոս և այլն: Ծիծեռնախոտի տերևների հյութով մեր օրերում հեռացվում են կոշտուկները, գորտուկները, մաշկի սնկային հատվածները, նաև թարախակալված վերքերը: Տերևներից պատրաստված լուծույթը հաճախ գործածվում է որպես լեղու արտազատիչ և միզամուղ, թուլացնող, ցավազրկող միջոց: Մաշկային հիվանդությունների համար օգտագործվում է քսուքը, որը պատրաստվում է ծիծեռնախոտի տերևների փոշուց, թարմ տերևների հյութից և դրա սպիրտային խառնուրդից: Սակայն, պետք է հիշել, որ ծիծեռնախոտն ունի թունավոր հատկություն, և մինչ այս կամ այն դեղատոմսն օգտագործելը, պետք է լավագույնս տեղյակ լինել հետևյալ կանոններին. նախ ծիծեռնախոտով բուժումը պետք է սկսել միայն այն դեպքում, երբ հայտնի է ձեր հիվանդության ախտորոշումը:

Բույսի ներքին ընդունման համար պատրաստված դեղատոմսերը հակացուցված են սրտամկանի առիթմային, սրտի իշեմիկ հիվանդությունների, հղիության, զարկերակային ցածր ճնշման դեպքում:

Բուժիչ հատկությունները

Կծու և դառը հյութը յուրահատուկ հոտ ունի: Այն պարունակում է ալկալոիդներ, վիտամին C, A պրովիտամին, եթերաուղեք, օրգանական թթուներ: Ծիծեռնախոտի պտուղներում 40 % ճարպալուղեք են պարունակվում: Ծիծեռնախոտի բուժիչ

հատկությունը պայմանավորված է հենց բնական ալկալոիդների պարունակությամբ: Բույսի մեջ եղած ալկալոիդներից մի քանիսն էլ կարող են կանխել չարորակ ուռուցքների մեծացումը: Դեղատոմսերի մեջ օգտագործվում են և՛ տերևները, և՛ արմատը, և՛ պտուղը՝ սերմերով: Բույսի թուրմն օգտակար է կարճատևության, լեղաապարկի հիվանդությունների ատամների պարոդոնտոզի դեպքերում:

Կալանխոտ

Գոյություն ունի կալանխոտի 200 տեսակ: Այս բույսի բոլոր տեսակներն էլ ունեն շարժական տերևներ ու ցողուններ: Այդ պարզաբան էլ բույսի լարիներեն թարգմանությունը նշանակում է՝ «հասարակ»: Ավելի հաճախ հանդիպող տեսակն է, որ լինում է տերևներով, ժողովրդի մեջ ընդունված է անվանել «սենյակային ժենշեն» կամ պարզապես՝ «բժիշկ»:

Կալանխոտն աճում և բազմանում է Ավստրալիայի արևադարձային շրջաններում: Կալանխոտի հյութը հարուստ է ֆլավոնոիդներով, այն իր մեջ պարունակում է մակրո- և միկրոտարրեր (ալյումին, մագնեզիում, երկաթ, կալցիում և



այլն), օրգանական թթուներ (խնձորաթթու, թթվալակթթու, քաջախաթթու), ինչպես նաև տարբեր ֆերմենտներ: Մեր հանրապետությունում կալանխոտն աճում է տնային պայմաններում՝ սենյակային բույսի տեսքով:

Կալանխոտին հատուկ են հակաբորբոքային, վերականգնող, արյունը կանգնեցնող հատկությունները: Այս բույսի հյութը կարելի է օգտագործել թրջոցների ու քսուքների տեսքով բորբոքային պրոցեսներ բուժելու համար: Կալանխոտի թարմ հյութով կարելի է կանգնեցնել արյունահոսությունը, բուժել մաշկի տարբեր բնույթի ցաները: Հյութը ստանում են բույսի կանաչ տերևներից՝ 7 օր պահելով 1-10 աստիճան ջերմաստիճանում և մուգ վայրում: Կալանխոտի հյութը պետք է այնպես պատրաստվի, որ պարզ ու մաքուր լինի և ոչ թե պղտոր: Կալանխոտի բուժիչ հատկությունները մարդկությանը ծանոթ են դարձել բավական ուշ: Օրինակ՝ բույսի տեսակը հայտնաբերելուց հետո, պարզ

ՄԵՋ ՀԱՅՏՆԻ ԲՈՒՅՍԵՐԸ

վել է, որ այն շատ լավ օգնում է գրիպի դեպքում. դրա համար ընդամենն անհրաժեշտ է հեղուկը քսել թթանցքերի լորձաթաղանթին: Մարդիկ ժամանակին ընդունել են այն՝ որպես կանխարգելիչ միջոց՝ չհիվանդանալու համար:

Երակների լայնացումից առաջացած ոտքի ցավերի դեպքում կարելի է ընդունել կալանխոտի թուրմ, իսկ պատրաստում են այն հետևյալ կերպ. կես լիտրանոց շի մեջ լցնել կալանխոտի տերևները, վրան լցնել 70 տոկոսանոց սպիրտ կամ սովորական օղի, այնուհետև շիջը դնել մուգ տեղում ու պահել 1 շաբաթ՝ երբեմն թափահարելով այն: Ստացված թուրմով պետք է մերսել ոտքերը՝ սկսած ոտքի թաթերից մինչև ծնկները: Բուժման կուրսը տևում է 2-4 ամիս: Տուբերկուլոզի ժամանակ կարելի է թուրմը նոսրացնել ջրով՝ 1:3 հարաբերությամբ, եւ ընդունել օրը 2 անգամ՝ կես թեյի գդալից: Կալանխոտի հյութը կարող է շատ արագ անցկացնել ատամի ցավը: Բույսի հյութն ամրապնդում է բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը: Այն շատ հարմար է կիրառել որպես կանխարգելիչ միջոց՝ մրսածության ու նյարդային համակարգի աշխատանքի խանգարումների դեպքում: Կարելի է նարնջի, կիտրոնի ու կալանխոտի հյութերը խառնել իրար և խմել՝ 20 գրամ կալանխոտի, 1 բաժակ նարնջի հյութի ու կես բաժակ կիտրոնի հյութի հարաբերությամբ:

Անանուխից ու կալանխոտից պատրաստված թեյը շատ լավ օգնում է գաստրիտի հետևանքով առաջացած ցավերի ժամանակ: Այն թեյը պետք է ընդունել 1 ամիս շարունակ: Թեյի պատրաստման համար անհրաժեշտ է 50 գ անանուխ, 2 ճաշի գդալ կալանխոտի հյութ և 200 գ եռացրած ջուր:

Երեխաների դիմադրողականության բարձրացման համար շատ լավ է պոլիվիտամինային նախաճաշը: Կալանխոտի մեկ տերևը մանրացնել, ավելացնել քերիչով անցկացված 150 գ խնձոր, կես նոսն հյութ և սովորական ընկույզի մանրացրած 10 միջուկ:

«Աստվածային սնունդ»՝ կակաո

Կակաոյի հայրենիքը Օրինկո գետի ավազանն է: Հենց այստեղ է առաջին անգամ հայտնաբերվել այս ամենաքաղցր, ոչ մի բանով աչքի չընկնող ծառը: 17-րդ դարից բույսը մշակվում է աշխարհի արևադարձային գոտիներում՝ Աֆրիկա, ԱՄՆ, ինչպես նաև Ճապոն և Ցեյլոն կղզիներում: Ամբողջ



աշխարհի կակաոյի ավելի քան 66 %-ն աճում է Աֆրիկայում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շոկոլադ սկսել են օգտագործել դեռևս 2500 տարի առաջ, Կենտրոնական Ամերիկայում: Զանի որ մայաների քաղաքակրթությունը կական համարել է աստվածային պարգև, այն չափազանց բարձր է գնահատվել: Այն օգտագործվել է անտիսեպտիկ արարողությունների ժամանակ և երբեմն՝ նաև ծառայել է փողին համարժեք վճարման միջոց:

Ացտեկները տրորում էին կակաոյի ուղեքը և նրանից խմիչք էին պատրաստում, որը կոչվում էր Xocolatl, որտեղից էլ առաջացել է շոկոլադ անվանումը, թարգմանաբար նշանակում է դառը ջուր կամ «աստվածների ըմպելիք»: Խմում էին միայն թագավորներն ու հերոսները. հասարակ մահկանացուներին այն հասանելի չէր:

Եվրոպացիները սկզբում կակաոյի ուղեքն օգտագործում էին շոկոլադե ըմպելիքի պատրաստման ժամանակ, այն էլ՝ ֆրանսիական բանակի զինվորների համար, որը Եներգիայի հոսքի շնորհիվ տաքացնում էր նրանց օրգանիզմը, մեծացնում տոկոսությունը և աշխատունակությունը: Եվ միայն որոշ ժամանակ անց, տաք շոկոլադ խմելը դարձավ ավանդույթ:

1674 թվականին Շվեյցարիայում սկսեցին պատրաստել շոկոլադի սալիկներ. ահա այդ ժամանակից էլ շոկոլադը դարձավ հասանելի հասարակ մահկանացուներին:

Իտալացիներն ու իսպանացիները խառնում են կակաոյի փոշին՝ սոխի, սխտորի, լոլիկի հետ, նաև համեմուն են ձկնային և մսային ուտեստները: Բժշկության մեջ կակաոյի յուղն օգտագործվում է 1710թ.-ից: Ընշման անկման, դեպրեսիայի, գլխացավի դեպքում օգտակար է առավոտյան խմել մեկ գավաթ կակաո, իսկ օրվա ընթացքում՝ ուտել 20 գրամ դառը շոկոլադ: Վերջինս հարմար է ուտել երեկոյան ժամերին, երբ ինսուլինի պարունակությունն արյան մեջ բարձրանում է: Բազմաթիվ հետազոտությունների միջոցով ապացուցվել է, որ կակաոն և դառը շոկոլադը չափավոր օգտագործման դեպքում, կանխում են ուռուցքների առաջացումը, պահպանում մաշկը վարդաժամ ծերացումից, օգտակար են ինֆարկտ տարած հիվանդներին, պահպանում են ատամները կարիեսից, լավացնում հիշողությունը:

Հետաքրքիր փաստեր.

Պարզվել է, որ շոկոլադի նկատմամբ քաղցը կարելի է հագեցնել միայն շոկոլադով:

Նապոլեոնը միշտ իր մոտ ունեցել է շոկոլադ, որը նա օգտագործել է՝ որպես տոնուսը բարձրացնող միջոց, նաև երբ ունեցել է Եներգիայի պահանջ:

Կակաոյի հատիկները շատ թանկ էին գնահատվում: Օրինակ՝ մեկ ստրուկին կարելի էր գնել 10 կակաոյի հատիկով:

Կակաոյի մեջ առկա տեոբրոմինը նպաստում է երջանկության հորմոնների՝ Ենդորֆինների զարգացմանը, որոնք բարձրացնում են տրամադրությունը: Շոկոլադը պարունակում է «ֆենամին», որը ներշնչում է սիրահարվածության պատրանք:

Իսպանացի կոնկիստադոր Հերնան Կորտեսն նշել է, որ այս ըմպելիքի մեկ բաժակը թույլ է տալիս ամբողջ օրն անցկացնել առանց ուտելիքի և առույգ լինել, նաև լրացնում մի շաբաթ միկրոտարրերի պակասը:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Advertisement for Agronews 2015. Includes subscription rates for 1, 6, and 12 issues in different currencies and languages. Text: «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի. 1 տարվա գինը՝ 3960 դրամ, 6 ամսվանը՝ 1980 դրամ, 1 համարինը՝ 120 դրամ. 1 տարվա գինը՝ 8100 դրամ, 6 ամսվանը՝ 4050 դրամ, 1 համարինը՝ 1350 դրամ. Բաժանորդագրությունը իրականացնում են Գյուղատնտեսության աշակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արտաշ» կազմակերպությունները.